

թեան վիճակն հիմակուան կարգ ու կանոնէն ռա-
խամեալ ընտրել չէր: 7

«Այս, այս, բնաւ հղումաւորն իրէ մը մտա-
ծելէն ետքը, ժողովրդեան աղիտութիւնն արհա-
մարձելէ չէ: Միայն զմարդեան հասարակն ա-
մենապարտէ թանն ան է, որ զգոգութեան իրենց
գարշէթի նպատակներուն համար ապուշ կը պա-
հանի: Մտալիք է իմաստասէր մը չենք կրնար ընել զգո-
ղութիւնը, վասն զի տախանի թանն մը չի հասկընար:
միայն մարդավարութեան յախտներակա նպատա-
կին կ'առաջնորդենք զինքը: փայտակոյտի մը ան-
գիտութիւնն կը վերցընենք, եւ իւր հեշտութիւն-
ներն՝ երեւակայեալ զգոգիթի մը ծծմբոյ շղատով
չենք դառնացընել: 7

«Եւ ահա ճիշդ ստոր համար յարմար ասեմն
է, կրկնեց Գրեգըն, որ Մորենոն ապարդէշէն հեռա-
նայ: Ըլտտ անգամ ունեցած մեծադարձեղ նկա-
րագիրն վրայ կը ցաւի, որ եթէ է կղերականաց ու-
րդապետը ինչ արգելուած չլլար, Յաճարին մեծ
զարգերէն մէկը կ'լլար: Հիմայ ուղածն ըրաւ. տե-
րութեան կարգ կանոն դրաւ, արդ մեր գործը պի-
տի ոլլայ՝ զհասարակապետութիւնն ապաստամու-
թեան առաջնորդել, որ կրթեալ ապիտակամորթաց
գործն է: 7

«Բայց այս նկատմամբ ի՞նչ ընելու միտք ու-
նիք: 7

«Կարդ ճամբան կը բռնենք: Կամ՝ մեր ծրա-
գիրներուն օգնութեամբն՝ մերձաւոր ընտրութեան
ժամանակ զՄորենոն կը կործանենք եւ մեր հա-
մադուսն ունեցող մէկ վարչութեան ղեկավար կ'ը-
նենք, եւ կամ, եթէ այս չլսալովն, ապաստմու-
թեան կամ՝ դաշունի ձեռքօր: 7

«Ետքը՝

«Ետքը՝ տերութեան վարչութեան մէջ մա-
տնական սկզբունքներ կը խառնենք: 7

«Եթէ կրօնի գլուղը, ըստ տգէտ ժողո-
վուրդն իբրեւ գիթ այլ ոտք կ'ենէ: 7

Գրեգըն մեծաբերիչ ծիծաղեցաւ. «Կրօնի
գլուղն ի՞նչ ըսել կ'ուզէ: Տգէտ ժողովրդեան
կրօնը կը թողուր, միայն այս կրօնը սարկելով ող-
բասաններ կը խառնէր իրեն: Եւ ապահով եղէք,
Տէր, հիմակուաներու նման հաղուստով: 7

Հոլանտացին գլուրի շարժեց. «Այսինքն,
կ'ուզէք այնպէս վարժել ինչպէս որ հին աշխարհ-
քին՝ խառն ժողովուրդը ունեցող տերութեան մը
մէջ է կարողութեան կարելի է վարժել: Խօսքը
մէջերսն» ձեռք խրատ մը տամ: Հոս կամեղիկեա-
կանութիւնն շատ տարածուած է: Եթէ Եփեսոս-
սեաններն մերթելու հրաման մը հանէր, եւ ոչ Յի-
սուսեան մը կ'ենէ կ'երթայ. բայց ի հարկաւորու-
թեան՝ միայն Եփեսոսեանից շնորհիւր կրնայ գուր
ձեռք գլուրի մահուանն ազատել: 7

«Հա, բնաւ Գրեգըն, թղթապատ ծիծիկն
ծուխն օդի մէջ փչելով, գուր սրգնատած եւրո-
պացիք գործքէ չէք հասկընար, թղթէն օրէնքնե-
րով կը սկսիք, եւ մէկ օրէնքը միւսին ետեւէն կը
հրատարակէք, այնպէս որ քահանան՝ առջ օրինաց
ժամանակ իւր հօտին գրութիւնն կը կրթէ, որով
երկրորդին ալ գիմանալ կը սարկեցընէ: Գուր ձեռք
թղթապատ մէկի մէկի օրէնքներ կաւ ապր, որով

ընականապէս ամենեւին աղեցութիւն յառաջ չի
գար. իսկ մինք, Տէր, մենք հաս օրէնքներէ չենք
սկսիք, այլ դատելուան գիտել կը ցուցնենք ժողո-
վրդեան եւ արեւալից դաշին մը կը շընջենք եւ
սեւազգեացներուն կը հարգընենք, որ արդեօք օրի-
նակ առկն: Կ'ապահովորենմ զնեզ, որ անոնք մեր
օրինաց հնազանդութիւն չեն դառնար: 7

«Հրմ, հրմ՝ որմնաց լիթին տակէն հղում-
ապային եւ տարակուսելով իւր լայն ուսերն ցնցեց:
(Ը-բռնուիլէն):

ԱՅԼԵԹԱՅԵՐ

ՆՈՐԱՆՈՒԹԵՐ

Երկիւղի աղեցողութիւնը մարդկային գործար-
անց վրայ:

Հրատարակի մտերն Մարկեմբերտը գիւղի
նորանշան գէպը մը պատահեցաւ. քանի մ'ամիս յա-
ռաւ: Ասիէ վեց տարի յառաջ ինք տարեկան գե-
ղացի աղջիկ մը՝ որ մը կատարի ցուլէ հայտնուելով՝
վախէն լեզուն կը կորսնցընէ, եւ մինչեւ այս ատար
մանը կը մնայ: Այն մ'առաւ երբ նոյն աղջիկն
դաշար կը գործէր, փոթորիկ մը կ'ենէ եւ աշագիւն
կայծակներ կը անգանն երկնքէն: Աղջիկը տարա-
փաճ կ'ապաւնէր ծառի մը տակ. եւ ահա շանիթ
կը զարնէ նոյն ծառն եւ աղջիկն՝ որ հարուածէ կ'ա-
գատի, տարտափած կը սկսի աղաղակել: Լեզուն կը
բացուի եւ թէ եւ ի սկզբան կ'ապաւնելով, բայց քանի
մ'օրէն կատարեալ կը սկսի խօսիլ:

ՏՆՏԵՍԱԿԵՆ

Արմաթի աշտանակները մարդկային փնդի:

Արմաթի աշտանակները մարդկային համար
պէտք չէ ծրագրել, բնածարպը կամ մոմը անար-
կով քերել, եւ որ ալ նոյնքն հայեցընելու համար
կրակի բռնել, վասն զի այս աշտանակներն սովորա-
բար գիւրահալ բաղադրութեամբ մը մածեալ են:
Ուստի լուսագոյն եւ փրստ անոնք լուր թափել են:
Անմիջապէս լաթով մը շփել, եւ մերկէն մարդկային
ծանօթ Նիւթով մը փայլեցընել:

Ճողպիւնց րոյնը ձմրանալէ մեջ:

Ծաղկի մ'անուշահոտ բոյրը կրնայ հետեւ-
եալ կերպով երեքոյն ասեղն մնալ: Պէտք է հոտաւա-
ծաղկիներ ժողովել ամենեւն աւելի անուշահոտու-
թեան ժամանակ, եւ մաքուր անօթի մէջ գնել
այս կերպով՝ Նախ անօթիդ յատարաւ ալ կը ցա-
նուի, վրան կարգ մը ծաղիկ կը շարուն, յետոյ
գարեալ ալ կը ցանուի եւ ծաղիկ կը դուրի, եւ
այսպէս յառաջ՝ մինչեւ որ անօթը լեցուի: Այնու-
հետեւ լաւ կը ճնշուի վերէն կարգն ալ ալ կ'ը-
լայ, եւ անօթը օգտիտ կը գոցուի: Քանի մը շառ-
թէն կրնայ բացուիլ եւ այն ամպիկներէ խոյսին
մէջ աղբին անգին դուրսի եւ մարդ ինք զինք ա-
նուշահոտ ծաղկանոցի մէջ կը գտնէ:

ՄԱՐԵՐԱԼՈՒԹՅՈՒՆ

Այստիպիս ամենամեծ շենքը:

Ամերիկա՝ Միենեակադրիս, սկսած է հսկայա-գործ շէնք մը շինուիլ, որուն ճառագող հիմքերը երկու հաշտակաւոր տասուներկու գետիկոնով պահգործ-ներն ինքզնիք ինքններ են: Այս նոր շէնքն էր նմանի հսկայ աշտարակի մը, անիկն պատուահաներով: Ունի քսանութու թիւ գետիկներ, վեր կ'ելլուի 12 շա-գետարծ վերամբարձ գործիքը: Այս ամեն մէկ գործ-իքն փարբիկ սրահի մը էր նմանի, ունի մէջն իւր կառավարիչն եւ շագետակաւոր մը պէն կ'ը գործէ այս ուղղակիք ճամբուն վրայ: Հէնքն ունի 728 մեծ սրահ, ամենն ալ փողոց նայող: Հէնքին մէջ տեղն վարեն մինչեւ վեր երկու երկաթիկ սանդուխ կայ, որ պիտի գործածուի եթէ ըստ պատահման վերամբարձ գործիքներն չգործեն: Տանիքն ապակիէ է եւ վերէն մինչեւ վարի գաւիթը լոյս կու տայ: Սե-նահանքերու յատուկ ու որմն երկաթիկ է: Վերամբարձ գործիքներն կ'են վայրկենի մէջ մինչեւ քսանուու-թեւորդ գաւիթին կը հանեն, աւտոյ այս բար-ձրութեան աւելի շուտով մարդ կ'ելլէ: Բան հա-տարակ ասն մ'առաջին գաւիթին: Հէնքին ճա-տարակային առով մեծ զիւտ մ'ըջած է արժան տուն շինելու: Վասն զի առով երկրի այլեւայլ հա-րկերէ ազատ մարդ կրնայ մինչեւ ամբարն տներ շի-նել, քանի որ օգն հարկէ ազատ է առակին: Առով մեծ քաղաքներուն մէջ օրէօր անոց երբիք հարկե-րուն առաւել կ'առնուի, եւ կրնանք այսու հետեւ ար-ժան տներ շինել, քաղաքներու մէջ գէշ բ բար-ձրութիւն ելլելով, գէղեքու մէջ յերկայնութիւն տարածուելով:

ՔԱՂԱՔԱՐԵՆԵ ՏԵՄԱՆՔԻՆԵ

Սեպտեմբր ամսոյն նորագոյն տրեմն ու քաղա-քագիտաց խոսակցութիւնները բաւական ուրախարար լոյս կը սփռեն ընդհանուր քաղաքականութեան վրայ, որոնցմէ կրնանք հետեւցնել, թէ Սուրբայի խաղաղա-կան վիճակը՝ զոնէ բաւական ժամանակաւն համար հաստատուած է, թէ եւ ոչ ոք կենայ ուրանալ, որ յան-կարծական դիպուածք կարող են սակաւ ժամանակի մէջ պարզանքներ փոփոխել եւ չկարողանալ խնդրոց եւ երկ-պատակութեանց առիթն առնալ: Ընդհանուրն կրնանք հաս-տատել, որ Սուրբայի իշխանաց մանաւանդ Գերմանիոյ երիտասարդ Կայսեր խաղաղութիւնը պահպանելու միջոց ու շնանքն ի դերին չնւալ, որուն պաշտոյնները Սեպ-տեմբր ամսոյն մէջ ըստ բաւական տեսանք:

Այս նպատակաւ էր անշուշտ Քրիստի Իտալիոյ պաշտօնէնց գահեկոյնը Պիզանոյ իշխանայն այցելու-թեան երթալը, նոյնպէս Աստորիոյ Արտաքին գործոց պաշտօնէին՝ Քալոթի կոմսին Պիզանոյ իշխանին հետ տեսնուիլը: Ժաման չէ հասարակութեան մանաւանդ Քա-լոթի կոմսին այցելութեան պատճառը, սակայն սովորա-կանն կրնանք հետեւցնել, որ ինչպէս ամէն տարի՝ այսպէս ալ այս տարի Քալոթի կոմսը Պիզանոյ իշխա-նին հետ տեսակցեցաւ ի մասնաւոր յառաջուն նիպա-կանցութիւն մարազնդելու եւ արով ընդհանուր խաղա-ղական վիճակը պահպանելու համար:

Աստորիա-Հոնդարան կը պատաստուի Գուլիել-մոս Բ. Գերմանիոյ Կայսրը Վիեննա ամենայն շքեղ փա-նաւորութեամբ ընդունելու: Կայսրը պիտի հասնի Վիեն-նա հոկտեմբեր 3ին: Ստուգիւ գարմանալի է երիտա-սարդ Կայսր ցուցած աշտոյթն ու ծանոցն Սուրբայի արքունեաց այց ելելուն եւ տնի առիթն բոլոր իշխանները յորդորելու Սուրբայի խաղաղութեան պահպանման: Այս նպատակաւ Իտալիոյ, Շուէտի եւ Դանիմարքայի սղոց-նեաց այցելութեան երթալէն ժամքն այժմ տեսակցե-ցաւ Վիեննայի մէջ եւ Գուլիելայի թագաւորաց հետ, որմէ ետեւ պիտի գայ Վիեննա իւր վաղեմի քարեկա-մուկեան ցոյցն յայտնելու, զօրանակելու Յոնկից Կայս-րը, զոր իբրեւ իւր մեծարոյ կայրը կը յարգէ ու կը պա-տուէ, իւր այցելութեամբը մեծարելու եւ երկու պետու-թեանց մէջ դրուած նիպակացութեան իւր կայսերական հաստատութիւնը տալու եւ երկու ազգերն իրարու հետ սերտի կապելու:

Գուլիելմոս Կայսրն երկար պիտի շնայ ի Վիեն-նա, այլ ասով ուղղակի Իտալիոյ արտ անցնի թագաւ-որին եւ Ս. Ժամանապատկերն այց ելելու համար:

Վախճանաւ Փրեզիդենտ Գ. Գերմանիոյ Կայ-սեր յիշատակաւոր նշանաւորութիւնը Գերմանիա մեծ խոտովութիւն յարող:

Մեզի ծանօթ լեռերէն ուղղակ կընանք հետեւցե-նել, տնի հրատարակեալ յիշատակագիրները վաւերա-կան շնն. եւ հրատարակողաց մի միայն նպատակն է խոտովութիւն զարթոնցանել եւ Գերմանիա տար տե-րութեանց առջն կապակցելն ընել:

Պիզանոյ իշխանն այսպիսի անդունմ ու յան-դուգն հրատարակութիւն իմաստուն պէս Վիեննայի Կայսեր ծանոցը բոլոր ինչորդն եւ անոր առջեւ դնելով մեծ վտանգ ու վատասկարութիւնը՝ ինչորք վիճակոտ Կայսրէն, որ իրեն հրաման տայ հրատարակողաց դէմ ամենայն խստութեամբ վարուելու եւ բուն հեղինակը զտնելու: Իրօք ընդունելով լուրի իշխանութեան վեհա-փառ Կայսրմէ արգելեց տուգան օրինակաց վաճառումն եւ օրինակները յարցունելու զուտը:

Ըստ նորագոյն լոց տնի հրատարակութեան բուն հեղինակը մերթապաւումս եւ արդէն տէրութեան դա-տարաւորն մեծոք միատնտուած է, սակայն դատին ման-րամատութեան վրայ տեղեկութեան շունչը, որովհե-տեւ խիստ գաղտնիք պահէ պատուիրուած է պաշտո-նատեսաց, մինչեւ որ բոլոր դատն աւարտի:

Գաղղիոյ խորհրդանոցին բացման ժամանակը մե-տնետուով հիմնաւորն լսելի կ'ըլլան գիտութիւնք եւ տա-րածախութիւնք այլեւայլ կուսակցութեանց մէջ: Պոլսա-թէ կը պատրաստուի խորհրդանոցին բացուելուն պէս իւր յառաջունք ծրագրին համեմատ յարձակները ց-նել խորհրդանոցին ու կառավարութեան դէմ: Կ'իտրայ թէ Փոլոց պաշտօնէնց գահեկոյնն ասոր առջինն անուոյ համար խորհրդանոցին բացուելուն պէս ամենապաշտ-թեան մամակաւ քննուիլուն ու փոփոխութեան պիտի առաջարկէ. սակայն այժմին ինք Զափաւորականներն ասոր ընդդէմ կը խոսին իրենց օրագրաց մէջ, եւ հաւ-անականապաղիս պաշտօնաւարին անկումս ան դուրս է:

ՀԻՐԱՅԸՄԱՆԻԶ ԵՒ ՊԱՏԵՄԻՆԵՆՏՈՒ ԽՐԲՈՒՐԻ
Հ. ԻՐԱՓԱՅԵԼ Կ. ՊԱՐԱՆԶ

ՎԻԵՆՆԱ, ՄԻԻԲԱՐԵՆԵ 89ԱՐԵՆ (W. HEINRICH)